ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ Ք. ԵՐԵՎԱՆ, ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ 87 ԵՎ 87Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «26» հունվարի 2022թ.

Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմն՝ ի դեմս վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատար Հակոբ Բալայանի, այսուհետ «Վարչական շրջան», մի կողմից և Միասնական սոցիալական ծառայությունը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Ագնեսա Աղաբաբյանի, այսուհետ՝ «ՄՍԾ» մյուս կողմից, հետագայում միասին՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. ՄՍԾ-ն պարտավորվում է կատարել ք. Երևան, Սասունցի Դավթի 87 և 87Ա հասցեներում գտնվող վարչական շենքի ջեռուցման գումարի փոխհատուցում (այսուհետև՝ Փոխհատուցում) Վարչական շրջանին՝ ըստ ամիսների և փաստացի ջեռուցված օրերի քանակի:

2.Պայմանագրի ժամկետը

2.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 1-ից և գործում է մինչև 2023 թվականի մարտի 30-ը:

2.2. Պայմանագրով նախատեսված Փոխհատուցումը ՄՍԾ-ն վճարում է յուրաքանչյուր օրացուցային տարվա դեկտեմբեր ամսից մինչև մարտ ամիսը ներառյալ օգտագործված ջեռուցման համար:

2.3. ՄՍԾ-ի կողմից Վճարն իրականացվում է Վարչական շրջանի կողմից համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ գումարը փոխանցելով 900025311615 հաշվեհամարին՝ նպատակ դաշտում նշելով «Վարչական շենքի ջեռուցման (գազ) գծով կոմունալ համավճար համապատասխան ամսվա գումար»:

2.4. Սույն Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին և յուրաքանչյուր դեպքում Կողմերի կողմից Պայմանագրի դադարեցման մասին որևէ ծանուցում չներկայացնելու դեպքում Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարացված հերթական 1 (մեկ) ջեռուցման սեզոնով սույն Պայմանագրով նախատեսված պայմաններով և ժամկետներով:

3. Պայմանագրի արժեքը և վճարման կարգը

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված ջեռուցման համար սահմանված Փոխհատուցումը յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով

X=G:4500x190

Որտեղ «X»-ը ՄՄԾ-ի կողմից ամսեկան վճարվելիք գումարն է,

«G»-ն՝ ք. Երևան, Սասունցի Դավթի 87 և 87Ա հասցեներում գտնվող վարչական շենքի ընդհանուր տարածքի համար տվյալ ամսվա ընթացքում ծախսած գազի համար վճարման ենթակա գումարի չափն է,

«4500»-ը՝ ք. Երևան, Սասունցի Դավթի 87 և 87Ա հասցեներում գտնվող վարչական շենքի ընդհանուր տարածքի չափը՝ հաշվարկված քառակուսի մետրով,

«190»-ը Հայաստանի Հանրապետության միասնական սոցիալական ծառայությանը հատկացված ք. Երևան, Սասունցի Դավթի 87 և 87Ա հասցեներում գտնվող վարչական շենքի տարածքի չափը՝ հաշվարկված քառակուսի մետրով:

4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1. ՄՄԾ-ն պարտավոր է սույն Պայմանագրի 3.1. կետով հաշվարկված գումարը Պայմանագրի 2.3. կետով սահմանված կարգով փոխանցելուց հետո 1-օրյա ժամկետում վճարման անդորրագրի պատճենը ներկայացնել Վարչական շրջանի աշխատակազմի ֆինանսական բաժին՝ միաժամանակ էլեկտրոնային տարբերակը ուղարկել erebuni.finansakan@mail.ru էլեկտրոնային հասցեին:

4.2. ՄՄԾ-ն միչև փոխանցում կատարելը իրավունք ունի դիմելու Վարչական շրջանին և ծանոթանալու տվյալ ամսվա համար վարչական շենքի ջեռուցման համար վճարման ենթակա ընդհանուր գումարի չափի վերաբերյալ տեղեկատվությանը:

4.3. Վարչական շրջանը պարտավոր է սույն Պայմանագրով նախատեսված կարգով և սակագնով ՄՄԾ-ին ապահովել անհրաժեշտ ջեռուցմամբ:

4.4. Վարչական շրջանը պարտավոր է հաշվարկի ստուգման ճշտության համար info@socservice.am էլեկտրոնային հասցեին ուղարկել գազի ծախսի վերաբերյալ մատակարարի կողմից դուրս գրված հաշվի պատճենը՝ 3 կետում նշված բանաձևի միջոցով:

4.5. Վարչական շրջանը իրավունք ունի առանց կողմին տեղեկացնելու դադարեցնել ՄՄԾ-ի ջեռուցումը, եթե Պայմանագրի 3.1. կետով նախատեսված վճարումը ՄՄԾ-ի կողմից ուշացվել է է 2 (երկու) անգամ:

4.6. Սույն Պայմանագրով Կողմերն ունեն պահանջելու կատարել սույն պայմանագրով նախատեսված իենց պարտավորությունները:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1. ՄՍԾ-ի կողմից սույն Պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում վճարվում է տույժ յուրաքանչյուր ժամետանց օրվա համար սույն Պայմանագրի 3.1. կետում նշված գումարի 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.2. Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե պայմանագրի խախտումը պայմանագրի մյուս կողմի պարտավորությունների անպատշաճ կատարման կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք էր:

5.3. Կողմերը սույն Պայմանագրով նախատեսված տույժերը վճարելով և վնասները հատուցելով չեն ազատվում սույն Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները լիով ծավալով կատարելուց:

5. Այլ պայմաններ

6.1. Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

6.2. Սույն Պայմանագրի Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3. Սույն Պայմանագիրը կնքվում է երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7. Կողմերի իրավաբանական հասցեները

«Վարչական շրջան»	«ՄՍԾ»
Երեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ	Միասնական սոցիալական ծառայություն
ք. Երևան, Սասունցի Դավթի փ. հ. 87	ք. Երևան Նալբանդյան 13
Կենտրոնական գանձապետարան	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 02505511
Հ/Հ 900025311615	Հ/Հ 900011556355
Երեբունի վարչական շրջանի ղեկավարի կախշտոնակատար	Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղար
Հ. Բալայան	Ա. Աղաբաբյան
/ստորագրություն/	/ստորագրություն/